ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«20» նոյեմբեր 2025թ. N 950-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» թիվ 730-Լ որոշման հավելված N 2-ով հաստատված 2.2-րդ թիրախային ուղղության 3.2-րդ կետի 6-րդ ենթակետի կատարումն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և ընդերքօգտագործող կազմակերպությունների միջև համագործակցության նպատակով մեխանիզմների ապահովման համար՝ Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությամբ նախատեսված փոփոխությունների իրականացման ժամանակացույցի և չափորոշիչների սահմանման նպատակով ստեղծել

աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) և հաստատել դրա կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Աշխատանքային խմբի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

5/20/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ք.Երևան

Հավելված 1
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2025 թ. մայիսի 20-ի N950-Ա
հրամանի

Կ Ա Զ Մ

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ընդերքօգտագործման ոլորտը համակարգող տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար)
2. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական
3. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետ
4. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն
5. Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան (համաձայնությամբ)
6. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի լեռնամետալուրգիայի և քիմիական տեխնոլոգիաների ինստիտուտի տնօրեն (համաձայնությամբ)
7. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն (համաձայնությամբ)
8. Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ (համաձայնությամբ)

9. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն (համաձայնությամբ)
10. «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)
11. «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության ֆինանսական տնօրեն (համաձայնությամբ)
12. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)
13. «Կապանի ԼՀԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ վարչական գծով (համաձայնությամբ)
14. «Թեղուտ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ (համաձայնությամբ)
15. «Ախթալայի ԼՀԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)
16. «Լիճքվազ» ՓԲ ՓԲ ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն (համաձայնությամբ)
17. «ԳՊՄ Գոլդ» ՍՊ ընկերության արտաքին քաղաքականության գծով տնօրեն (համաձայնությամբ)
18. «Մեղրաձոր Գոլդ» ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)
19. Հանքարդյունաբերական պալատի գործադիր նախագահ
20. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժնի պետ (աշխատանքային խմբի քարտուղար)

Հավելված 2
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2025 թ. մայիսի 20-ի N950-Ա հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությամբ նախատեսված փոփոխությունների իրականացման ժամանակացույցի և չափորոշիչների սահմանման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի (այսուհետ նաև՝ ԱԽ) աշխատանքների կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատանքային խումբը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Աշխատանքային խմբի գործառույթներն են՝

1) ստեղծել մեխանիզմներ Հայաստանի Հանրապետության կառավարության և ընդերքօգտագործող կազմակերպությունների միջև համագործակցության ընդլայնման համար.

2) ապահովել կողմերի պատշաճ մասնակցությունը հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականությունից բխող իրավական ակտերի մշակման, սահմանված միջոցառումների իրականացման գործընթացում՝ նպատակ ունենալով բարձրացնել ներգրավվածությունը, թափանցիկությունը, ինչպես նաև հանքարդյունաբերության

ոլորտի քաղաքականության իրականացման հանդեպ պատասխանատվությունը՝ ընդերքօգտագործման ոլորտին առնչվող ցանկացած գործունեություն իրականացնող կամ ոլորտի վերաբերյալ որոշումներ կայացնող կողմերի շրջանում.

3) սահմանել Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությամբ նախատեսված փոփոխությունների իրականացման իրատեսական ժամանակացույց և չափորոշիչներ՝ հաշվի առնելով սահմանվող պահանջների իրականացման տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները.

4) գործողությունների պլանով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքի և ուղղակի արդյունքների վերլուծության հիման վրա առաջարկել գործողությունների պլանի միջանկյալ վերանայում:

3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

4. ԱԽ-ն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են յուրաքանչյուր եռամսյակ՝ առնվազն 1 անգամ: Աշխատանքային խմբի նիստերը կարող են իրականացվել նաև առցանց կամ հեռավար եղանակով:

5. ԱԽ-ի նիստերը հրավիրում և վարում է ԱԽ-ի ղեկավարը:

6. ԱԽ-ի ղեկավարի բացակայության դեպքում նիստը վարում է ԱԽ-ի անդամներից մեկը՝ ԱԽ-ի ղեկավարի բանավոր հանձնարարությամբ:

7. ԱԽ-ի նիստերին, ըստ անհրաժեշտության և նպատակահարմարության, կարող են հրավիրվել այլ պետական պաշտոնյաներ, Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության շահագրգիռ կողմերի ներգրավման պլանում ընդգրկված՝ հիմնական շահագրգիռ կողմերի խմբերից (գիտական հանրություն, ԱՃԹՆ բազմաշահառու խումբ, պետական մարմիններ, քաղհասարակություն, ընդերքօգտագործող կազմակերպություններ) ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ փորձագետներ:

8. ԱԽ-ի անդամները և հրավիրվող անձիք ԱԽ-ի քարտուղարի կողմից տեղեկացվում են ԱԽ-ի նիստի անցկացման վայրի, օրվա, ժամի և նիստի օրակարգի մասին՝ նիստի անցկացման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

9. ԱԽ-ի ղեկավարը՝

1) համակարգում է Աշխատանքային խմբի գործունեությունը.

2) հրավիրում և վարում է նիստերը.

3) հրավիրում է ԱԽ-ի անդամ չհանդիսացող՝ սույն աշխատակարգի 7-րդ կետում ներառված, այլ անձանց ԱԽ-ի նիստերին.

4) իրավիճակից և լուծման ենթակա հարցերից բխող ցուցումներ է տալիս ԱԽ-ի անդամներին.

5) ստորագրում է նիստերի արձանագրությունները.

6) իր բացակայության դեպքում ԱԽ-ի անդամներից մեկին հանձնարարում է վարել նիստը.

10. ԱԽ-ի անդամն իրավունք ունի՝

1) ներկայացնելու առաջարկություններ ԱԽ-ի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

2) գործողությունների պլանով սահմանված յուրաքանչյուր միջոցառման վերջնաժամկետից ոչ ուշ, քան 3 ամիս առաջ ԱԽ-ի ղեկավարին ներկայացնել տվյալ միջոցառման իրականացման վերաբերյալ գրավոր առաջարկություն.

3) ծանոթանալու ԱԽ-ի նիստերի արձանագրություններին:

11. ԱԽ-ի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել ԱԽ-ի նիստերին և աշխատանքներին.

2) իրականացնել սույն աշխատակարգով իրեն վերապահված գործառույթների պատշաճ և ժամանակին կատարումը,

3) իրականացնել սույն աշխատակարգի գործառույթների իրականացմանը վերաբերող գործողություններ:

12. ԱԽ-ի անդամը՝ նիստին իր մասնակցության անհնարինության մասին նախօրոք՝ նիստից առնվազն 1 օր առաջ պետք է գրավոր կամ բանավոր տեղեկացնի ԱԽ-ի ղեկավարին:

13. ԱԽ-ի քարտուղարը ԱԽ-ի բնականոն գործունեության ապահովմանն աջակցելու նպատակով՝

1) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու դրանք տրամադրում ԱԽ-ի անդամներին.

2) կազմում է ԱԽ-ի նիստերի արձանագրությունները.

3) վարում է ԱԽ-ի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

4) գրանցում է ԱԽ-ի անդամների ներկայացրած գրավոր կարծիքները, առաջարկությունները.

5) իրականացնում է ԱԽ նիստերի հրավիրման համար անհրաժեշտ կազմակերպչական գործառույթներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

14. ԱԽ-ի աշխատանքները համարվում են ավարտված, և նրա լիազորությունները դադարում են գործողությունների պլանով սահմանված միջոցառումների իրականացման ավարտից հետո: